

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՀԿ N-39/18
Սուբսիդիա փրամադրելու մասին

ք. Երևան

« 29 » « հունվար » 2018թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ Պարվիրատու), ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիր » ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ կատարող), ի դեմս կազմակերպության տնօրեն՝ Ա. Բլեյանի, մյուս կողմից, հիմք ընդունելով «ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N1313 -Ն որոշումը (այսուհետ՝ որոշումը), ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված «Հանրակրթական ուսուցում» ծրագրով նախատեսված հանրակրթական պետական չափորոշչին համապատասխան միջին փարեկան 1426 սովորողի ուսուցումը կազմակերպելու համար (այսուհետ՝ ծառայություն), ընդ որում՝

- 1. փարրական ընդհանուր կրթության գծով միջին փարեկան 693 սովորողի համար.
- 2. հիմնական ընդհանուր կրթության գծով միջին փարեկան 565 սովորողի համար.
- 3. միջնակարգ / լրիվ / կրթության գծով միջին փարեկան 168 սովորողի համար.
- 1.2. սոցիալապես անապահով ընդհանրապես երեխաների դասագրքերի վարձավճարի փոխհատուցման համար՝
- 2. հիմնական ընդհանուր կրթության գծով 565 սովորողի համար.
- 3. միջնակարգ / լրիվ / կրթության գծով 168 սովորողի համար.

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2.1. Պարվիրատուն իրավունք ունի.
 - 2.1.1. վերահսկել կատարողին հարկացված դրամական միջոցների օգտագործման արդյունավետությունը
 - 2.1.2. Պահանջել կատարողից ներկայացնել եռամսյակային հաշվետվություններ սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետներում.
 - 2.1.3. Կատարողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին :
- 2.2. Կատարողն իրավունք ունի.
 - 2.2.1. Պարվիրատուից ստանալու ՀՀ պետական բյուջեից հարկացվող գումարը սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում և կարգով:
- 2.3. Պարվիրատուն պարտավոր է.
 - 2.3.1. Կատարողին ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օժանդակություն և աջակցություն.
- 2.4. Կատարողը պարտավոր է.
 - 2.4.1. Սովորողների ուսուցումն իրականացնել հանրակրթության պետական չափորոշչին և առարկայական չափորոշիչներին համապատասխան՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և ձևով.

3. ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

- 3.1. Սույն պայմանագրով նախատեսված ՀՀ բյուջեից պետական աջակցության առավելագույն չափը կազմում է 274526800 (երկու հարյուր յոթանասուներորս միլիոն հինգ հարյուր քսանվեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ընդ որում՝
 - 1. փարրական ընդհանուր կրթության գծով 139073900 ՀՀ դրամ
 - 2. հիմնական ընդհանուր կրթության գծով 96776800 ՀՀ դրամ
 - 3. միջնակարգ / լրիվ / կրթության գծով 38255900 ՀՀ դրամ

սոցիալապես անապահով ընդանիքների երեխաների դասագրքերի վարձավճարի գծով

2. հիմնական ընդհանուր կրթության գծով 313900 ՀՀ դրամ

3. միջնակարգ / լրիվ / կրթության գծով 106300 ՀՀ դրամ

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Կողմերը պատասխանավորություն են կրում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ-ՀԱՆՁՆՈՒՄ

5.1 Սույն պայմանագրով նախատեսված ծառայության ընդունումը կատարվում է համաձայն հանձնման-ընդունման ակտի՝ մինչև հաջորդող փարվա փեփրվարի 1-ը:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանավորությունից, եթե այդ իրավիճակը ստեղծվել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են. բնական աղետները, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ իրավիճակի հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխարհային դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

7. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում ստորագրման պահից, գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:


7.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կամ համաձայնագիր /համաձայնագրեր/ ձևակերպելու միջոցով: Վերջիններս կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից և հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հ կրթության և գիտության նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական փողոց 2
ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005361
Հ/Հ 900011005379
Հ/Հ 900011005387
Հ/Հ 02512868



ԿԱՏԱՐՈՂ

«Երևանի Մխիթար Սեբաստյանցի կրթահամալիր»
ՊՈԱԿ
ք. Երևան, Ա. Բաբաջանյան 25
Հայէկոնոմբանկի Մեդաքս մ/ճ
Հ/Հ 163218137665
Հ/Հ 01804186



/ ստորագրություն / Կ.Տ

/ ստորագրություն / Կ.Տ